ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 26.12.2025թ.
Ժամը 16^{30}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկի հատուկ թղթակից, հիմնարկի պետի տեղակալ, փոխգնդապետ Զ. Մաթևոսյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ԳԿ պլանավորման և հսկողության բաժնի ավագ մասնագետ՝ Ա. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ Տ և ՀՎ ՏՔ և Ա բաժնի պետ Կ. Պետրոսյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս.Եսոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	«ԷՄ ԷՌ ԷՆ» ՍՊԸ
2	«ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ
3	«Սթեյջ Սթայլ» ՍՊԸ
4	«ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Բոլոր Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/-ի, մասնավորապես՝

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը միաձայն որոշեց մերժել «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/-ի կողմից ներկայացված հավելված 2-ը՝ գնային առաջարկը, հիմնավորելով, որ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/ չեն համապատասխանում /ճիշտ չեն/ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես Արժեք և ԱԱՀ սյունակներում տառերով և թվերով նշված տվյալները չեն համապատասխանում Ընդհանուր գին սյունակի տառերով նշվածի հետ (Մասնակցի գնային առաջարկը ներկայացված է ստորև), իսկ «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/-ի կողմից ներկայացված հայտում առկա մյուս փաստաթղթերի համապատասխանությունը սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) գնահատող հանձնաժողովի կողմից դեռևս չի դիտարկվել՝

Չափաբաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Վերականգնման աշխատանքներ (ՀՀ ՊՆ «ԶԻՆՈՒԺ ՄԵԴԻԱ» ՊՀ նկարահանման տաղավարի վերանորոգում)	16 240 000 /տասնվեց միլիոն երկու հարյուր քառասուն հազար/	3 248 000 /երեք միլիոն երկու հարյուր քառասունութ հազար/	19 488 000 /տասնինը չորս հարյուր ութսունութ հազար/

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Սակայն սույն ընթացակարգի քարտուղարը համաձայն չէ գնահատող հանձնաժողովի վերոնշյալ որոշման հետ, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի զ) պարբերության և սույն ընթացակարգի 1-ին մասի 5-րդ կետի 5.2-րդ ենթակետի ե) պարբերության պահանջների՝ Մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը.

Ընթացակարգի քարտուղարը, հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 27-րդ կետի պահանջները՝ որոշեց գրավոր զեկուցագրով դիմել Պատվիրատուի ղեկավարին՝ Կարգի 27-րդ կետի պահանջներին համապատասխան կասեցնելու հանձնաժողովի գործունեությունը և հանձնարարելու ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությանը՝ տալ իրավական եզրակացություն գնահատող հանձնաժողովի սույն արձանագրության 2.3 կետով ընդունած որոշման վերաբերյալ:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

(Ս. Եսոյան)

3.1 Հաջորդ նիստը կկայանա ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից համապատասխան տեղեկատվության տրամադրումից հետո ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Զ. Մաթևոսյան

Գնահատող, Ա. Բարսեղյան

Գնահատող, Կ. Պետրոսյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

14.01.2026թ.
Ժամը 10^{30}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկի հատուկ թղթակից, հիմնարկի պետի տեղակալ, փոխգնդապետ Զ. Մաթևոսյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ԳԿ պլանավորման և հսկողության բաժնի ավագ մասնագետ՝ Ա. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ Տ և ՀՎ ՏՔ և Ա բաժնի պետ Կ. Պետրոսյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. 26.12.2025թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման կասեցված նիստի օրակարգը շարունակելու վերաբերյալ.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
4. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1 . 26.12.2025թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման կասեցված նիստի օրակարգը շարունակելու վերաբերյալ.

(Ս.Եսոյան)

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետի 07.01.2026թ. թիվ 13 գրությամբ տրված իրավական եզրակացության համաձայն՝ սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2025թ. **N 3 արձանագրության 2.3-րդ կետով ընդունված որոշումը՝** «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/-ի կողմից ներկայացված հավելված 2-ը՝ գնային առաջարկը, մերժելու որոշումը, իրավաչափ չէ և Մասնակցի հավելված 2-ը՝ գնային առաջարկը մերժման ենթակա չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց շարունակել գնահատումը «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/-ի կողմից ներկայացված հայտում առկա մյուս փաստաթղթերի համապատասխանությունը սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), որի արդյունքում պարզվեց, որ «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/-ի հայտով ներկայացված փաստաթղթերում՝ լիազորագրում և համատեղ գործունեության պայմանագրում, առկա են որոշ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «Ղուրուչուխ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով 01.12.2025թ. կնքել են համատեղ գործունեության պայմանագիր («ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/), ինչպես նաև 01.12.2025թ.-ին լիազորել են Վարդան Սողոմոնյանին էլեկտրոնային ստորագրելու և ներկայացնելու «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/-ի անունից համատեղ գործունեության պայմանագրի 1.1 կետով սահմանված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտի փաստաթղթերը: Այնինչ

01.12.2025թ.-ի դրությամբ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգ կազմակերպված չի եղել, հետևաբար «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում վերոնշյալ համատեղ գործունեության պայմանագիրը չէր կարող կնքվել, ուստի գոյություն չունեցող ընթացակարգի շրջանակներում Վարդան Սողոմոնյանը չէր կարող 01.12.2025թ.-ի դրությամբ հանդես գալ որպես լիազորված անձ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 14.01.2026թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: 16.01.2026թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

2.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 4 մասնակիցներ.

Հ/հ	Աշխատանքի անվանումը	չ/մ	Գնման գինը (միավորի գների հանրագումարով) /ՀՀ դրամ/	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների անվանումները	գնային առաջարկները /ՀՀ դրամ/		
					առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Վերականգնման աշխատանքներ (ՀՀ ՊՆ «ՋԻՆՈՒԺ ՄԵԴԻԱ» ՊՀ նկարահանման տաղավարի վերանորոգում)	դրամ	23,000,000	«ԷՄ ԷՌ ԷՆ» ՍՊԸ	18 745 000	3 749 000	22 494 000
				«ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ	17 890 000	3 578 000	21 468 000
				«Սթեյջ Սթայլ» ՍՊԸ	16 500 000	3 300 000	19 800 000
				«ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/	16 240 000	3 248 000	19 488 000

2.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

2.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

3.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ **16.01.2026թ.** «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Ղուրուչուխ» ՍՊԸ /կոնսորցիում/-ը:

3.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-26-12/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

(Ս. Եսոյան)

3.1 Հաջորդ նիստը կկայանա ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից համապատասխան տեղեկատվության տրամադրումից հետո ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Զ. Մաթևոսյան

Գնահատող, Ա. Բարսեղյան

Գնահատող, Կ. Պետրոսյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան